ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360 Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.02.2012թ.
158-ի 1

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մինչ հողահատկացումը ի՞նչ կարգավիճակ է ունեցել Երեւան քաղաքի Մաշտոցի այգու տարածքը, եւ արդյոք փոխվե՞լ է տարածքի կարգավիճակը հողահատկացումից հետո:
2. Ե՞րբ են կատարվել հողահատկացումները, որքա՞ն մակերեսով, ի՞նչ նպատակով եւ որքա՞ն ժամկետով:
3. Ու՞մ կամ ո՞ր կազմակերպությանն (կազմակերպություններին) են կատարվել հողահատկացումները:
4. Ե՞րբ է տրվել վերոնշյալ տարածքում շինարարության թույլտվությունը եւ ի՞նչ հիմքով:
5. Խնդրում ենք տրամադրել հողահատկացման, շինարարական թույլտվության եւ ճարտարապետահատակագծային առաջադրանքի պատճենները:
6. Արդյոք իրականացվե՞լ է հասարակության ծանուցում եւ քննարկում տվյալ հանրային տարածքը առեւտրային գոտու վերածելու վերաբերյալ: Եթե այո, ապա՝ ե՞րբ եւ ու՞մ մասնակցությամբ:
7. Խնդրում ենք հայտնել, թե նման շինարարության թույլտվություն տրամադրելիս, հաշվի առնվե՞լ է «Քաղաքաշինություն. հատակագծում եւ կառուցապատում քաղաքային եւ գյուղական բնակավայրերի» ՄՆԻՊ 2.07.01-89 -ի 4.12 կետի 4-րդ աղյուսակի կանոնը (քաղաքաշինական նորմը), ըստ որի շինության արտաքին պատը ծառի բնից պետք է հեռու լինի 5 մետր:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան